



### HOLY TRINITY ARMENIAN CHURCH

14 WOODLAWN AVE. WEST, TORONTO, ONTARIO, M4V 1G7, TEL: 923-0081

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՆԱՅԱՏԱՆԵԿՅՈՒ ԵԿԵՂԵՉԻ

ՅուՆուար 29, 1974  
Թորոնթօ, Գանատա

Very Rev. Jirayr Tashjian - Pastor  
PARISH OFFICE TEL: 924-6514

#### Գերաշնորհ

Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկ.Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Տիրախնամ Թեմին Ամերիկայի,  
Նիւ Եորք,  
Սրբազան Հայր,

Ս.Երրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Կիրակի, ՅուՆուար 27, 1974 կէսօրէն ետք ժամը 4.00ին Հոգեւոր Հովիւին նախագահութեամբ եւ Տիար Վարդան Վարդանեանի ատենապետութեամբ:

Եկեղեցւոյս 300 անդամներէն 102 անդամներու ներկայութեան եւ օրինաւոր նիստին հաստատուեցան ծխական խորհուրդիս եւ յարակից մարմիններու եւ կազմակերպութեանց տեղեկագիրները եւ վաւերացուեցաւ եկեղեցւոյս 1974 տարւոյ նախահաշիւը:

Ժողովի վերջաւորութեան եւ 94 իրաւասու անդամներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ ծխական խորհուրդիս լրացուցիչ ընտրութիւնները, քուէից առաւելագոյն կարգով ներկայացնելով ընտրեալ անդամացանկը խոնարհաբար կը խնդրենք Ձերդ Սրբազնութեան վաւերացումը.-

Տիարք	Արմէն Բիւրքճեան	73 քուէ,
	Եղուարդ Էօտեմիշլեան	62 ,,
	Պետրոս Գոգորեան	49 ,,
	Մինաս Սէլեան	39 ,,

յաջորդ առաւելագոյն քուէն ստացաւ Մարտիկ Փափագեան 38 քուէ:

Հաճեցէք ներփակ ստանալ Հոգեւոր Հովիւի գրաւոր զեկոյցը, ծխական խորհուրդի եւ յարակից մարմիններու տեղեկագիրներու պրակը, ինչպէս նաեւ Առաջնորդարանիդ հարցարանը:

Տիրախնամ Թեմիդ ազգային եկեղեցական կեանքի բարգաւաճման եւ հաւատարմական լաւագոյն զգացումներով մնամ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Խոնարհ որդիդ  
Աղօթակից

*Jirayr Tashjian*  
Ժիրայր Դրո. Թաշճեան

Հոգ. Հովիւ եւ նախագահ Տարեկան ծխական ժողովի  
Ս.Երրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ